Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավաաություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.
պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:
Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

336.3
pu-11
17 FEB 2010

# ՀՐԱՀԱՆԳ № 213

## Գյուղացիական բնակչության մեջ «հնգամյակը չորս տարում փոխառու.թյան յերկրորդ բաժնի (հնգամյակի յերրորդ վճռական տարվա մասի) տարածելու մասին:

(Հրատարակվում է ԽՍՀՄ-ի ԿԳԿ յեվ ԺԿԽ «Հնգամյակը չորս տարում փոխառության յերկրորդ բաժինը բաց թողնելու վորոշման հիման վրա)

## I. ՀԱՂԹԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՐՁԱԿՄԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆԸ

*Միլիոնավոր աշխատավորների կամքով Խորհրդային կառավարության կողմից բաց թողնված «Հնգամյակի յերրորդ վճռական տարվա փոխառությունը» հանդիսանում է սոցիալիստական կառույցի հզոր ավանդը, վորն օժանդակում է ավարտելու սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումը մեր յերկրում:*

*Նոր փոխառության տարածումն անցկացվում է վորպես մասսայական հասարակական-քաղաքական կամպանիա: Փոխառության կամպանիան գյուղում պետք է անցնի կատաղի դասակարգային պայքարի պայմաններում: Այդ պահանջում է կոլտնտեսականների և ամբողջ աշխատավորական գյուղացիության ուժերի ամենալայն մոբիլիզացիան: Փոխառության հաջող տարածումը կհանդիսանա նոր ջախջախիչ հարված կապիտալիզմի վերջին պատվարին գյուղում—կուլակությանը:*

*«Հնգամյակը չորս տարում» փոխառության յերկրորդ մասը (Հնգամյակի յերրորդ վճռական տարվա մասի) բոլոր նախորդ փոխառություններից հանդիսանում է ամենախոշորը: Նոր փոխառության վերստուգիչ թվերը սահմանված եյին մեկ միլիարդ յոթը հարյուր միլիոն ռուբլի (1·700 միլիոն). այս գումարից 500 միլիոն ռուբլի պետք է տարածել գյուղացիության մեջ: Նոր փոխառությունը պետք է հատուկ կերպով բարձրացնի գյուղացիական բնակչության տեսակարար կշիռը ԽՍՀՄ-ի պետական վարկի մեջ, քանի*

12.09.2013
27963
18673

վոր մինչև այժմ գյուղի մասնակցությունը պետփոխառություններին յեղել է անբավարար: Այդ պատճառով գյուղացիության մեջ փոխառությունը տարածելու համար տարվող կամպանիան պահանջում է ամբողջ գյուղացիական հասարակության և ամբողջ խորհրդային ապարատի հատուկ ուշադրությունը:

Վերստուգիչ թվերը անպայման կատարվող են և հիմնվում են աշխատավոր գյուղացության նյութական բարօրության բարձրացման և կոլեկտիվացող գյուղի յեկամուտների աճման վրա:

Փոխառության կամպանիան պետք է անցկացվի լայն մասսայական աշխատանքի ծավալման հիման վրա: Կամավորությամբ հանդիսանում է կամպանիայի անսասան մասը: Կտրականապես արգելվում է կիրառել վորևէ վարչական ստիպողական միջոցներ փոխառության տարածման ժամանակ: Վճռական հարված պետք է հասցվի ինքնահոսին, վորպես օպորտունիզմի իսկական դրսևորման պրակտիկայում: Միայն մասսայական աշխատանքի մեթոդները (սոցմրցում, հարվածայնություն, հասարակական բուքսիր, չեֆություն, հանդիպական պլաններ և այլն) կապահովեն փոխառության կամպանիայի հաջողությունը գյուղում: Կոլտնտեսականը՝ Խորհրդային Իշխանության այդ գլխավոր հենարանը գյուղում պետք է դառնա նախամարտիկ փոխառության տարածման գործում: Կոլտնտեսային հասարակայնությունը՝ դա գյուղի առաջավոր հասարակայնությունն է: Նա պետք է դառնա կազմակերպիչ և առաջամարտիկ վոչ թե միայն բաժնեգրությունը կոլտնտեսականների մեջ անցկացնելու, այլ և մենատնտեսների (единоличник) մեջ փոխառությունը տարածելու գործում:

## II· ՎՈ՞Ր ԱՊԱՐԱՏՆ Է ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ՅԵՎ ԱՆՑԿԱՑՆՈՒՄ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՆ·

1· Փոխառության կամպանիայի ընդհանուր ղեկավարությունը գյուղում և փոխառության հաջող տարածելու պատասխանատվությունը դրվում է Շրջգործկոմների նախագահությունների վրա: Փոխառության կազմակերպչական-օպերատիվ աշխատանքն անցկացնում են շրջխնայդրամարկղները և Պետբանկի բաժանմունքները Շրջգործկոմների ֆինբաժինների անմիջական ղեկավարությամբ:

Փոխառության տարածման կազմակերպչական-օպերատիվ աշ-



7624-51

խատանքի հաջող և ժամանակին անցկացնելու պատասխանատվությունն ընկնում է շրջֆինբաժինների վարիչների վրա: Խնայդրամարկղների վարիչները և Պետբանկի բաժանմունքների կառավարիչները կրում են փոխառության տարածման այդ վարկային հիմնարկների վրա դրված աշխատանքի հաջող կատարման պատասխանատվությունը:

2· Փոխառության տարածման աշխատանքը գյուղում դրվում է գյուղխորհուրդների վրա, վորոնք պատասխանատու յեն փոխառության հաջող տարածման համար իրենց դիրեկտորիայում փոխառության ղեկավարությունը նրանք կենսագործում են իրենց շրջանում, տարածում են պարտատոմսերը մենատնտեսների մեջ, ինչպես նաև հավաքում են կոլտնտեսականներից պարտատոմսերի դիմաց հասանելիք մուծման վճարները և կատարում են վարկային ընկերության հետ կոլտնտեսականների բաժնեգրման հաշվարկումները:

3· Գյուղխորհուրդներին, կոլտնտեսություններին, խորհտնտեսություններին և Մ.Տ.Կ. կից պետվարկին և խնայգործին օժանդակող հանձնաժողովները պետք է լայն ծավալեն փոխառության կամպանիայի անցկացման աշխատանքներ: Կոլտնտեսականների վարչությունները և նրանց կից օժանդակող հանձնաժողովները կազմակերպում են բաժնեգրություն կոլտնտեսականների մեջ, ագիտմասսայական աշխատանք են անցկացնում ինչպես կոլտնտեսականների մեջ, նմանապես և մենատնտես գյուղացիների մեջ: Կամպանիայի անցկացման համար պետք է մոբիլիզացիայի յենթարկել ամբողջ գյուղական հասարակայնությունը և գյուղական ակտիվը:

## III· ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

4· Մինչև փոխառության տարածման սկսելը պետք է վերջացվի ամբողջ նախապատրաստական աշխատանքը ինչպես հասարակայնության գծով, նմանապես և ապարատի գծով:

### Վերստուգիչ թվեր·

5· Ֆինբաժինները փոխառության վերաբերյալ ստացած վերստուգիչ թվերը մշակում են և բաշխում ըստ առանձին գյուղխորհուրդների: Շրջգործկոմի կողմից կոնտրոլ թվերը հաստատվելուց հետո անհապաղ հասցվում են մինչև յուրաքանչյուր գյուղխորհուրդ: Կտրուկ կերպով արգելվում է առանձին վերստուգիչ թվեր

սահմանել առանձին գյուղական աշխատավորական տնտեսությունների համար:

## Կամպանիայի ծրագիրը·

6· Շրջխնայգրամարկղը Պետբանկի բաժանմունքի հետ միասին մշակում է շրջանում անցկացվող կամպանիայի ընդհանուր ծրագիրը: Ծրագրում նախատեսվում է յուրաքանչյուր շրջանային և գյուղական կազմակերպության կամպանիային մասնակցելը և պարտավորությունները: Ծրագիրը հաստատում է Շրջգործկոմը: Հաստատված պլանը պետք է հայտնի լինի գյուղխորհուրդներին, կոլտնտեսություններին, խորհտնտեսություններին Մ·Տ·Կ· վարկային հիմնարկներին և այլն:

## Հասարակայնության նախապատրաստելը

7· Լուրջ ուշադրություն պետք է դարձնել ոժանդակող հանձնաժողովների նախապատրաստմանը: Շրջանային ոժանդակող հանձնաժողովը պետք է վերահաշվառման յենթարկի շրջանի բոլոր ստորին ոժանդակող հանձնաժողովներին: Գյուղխորհուրդներին կից ոժանդակող հանձնաժողովներին նախագահելը և աշխատանքի ղեկավարությունը պետք է դրվի գյուղխորհուրդների անդամների վրա: Բոլոր գյուղխորհուրդներին, կոլտնտեսություններին, խորհտնտեսություններին, Մ·Տ·Կ· կից անպայման պետք է կազմակերպվեն ոժանդակող հանձնաժողովներ: Հատկապես պետք է ստուգվեն, թե արդյոք ոժանդակող հանձնաժողովներ ունեն կոլտնտեսությունները: Անհրաժեշտ է վերանայել կոլտնտեսություններին կից ոժանդակող հանձնաժողովների կազմը և ամրացնել այն ակտիվիստներով և առաջավոր կոլտնտեսականներով: Բոլոր ոժանդակող հանձնաժողովներին կից պետք է ստեղծվեն հասարակական հրահանգիչների կադրեր:

Շրջանային ոժանդակող հանձնաժողովները կազմում են իրենց աշխատանքային որացուցային պլանը, վորի մեջ նախատեսվում են կամպանիայի բոլոր մոմենտները: Յուրաքանչյուր ստորին գյուղական ոժանդակող հանձնաժողով նմանապես ծրագիր է կազմում—կամպանիայի անցկացման իր աշխատանքի հուշատետրը:

8· Փոխառության հարցը պետք է քննարկվի Շրջգործկոմների և գյուղխորհուրդների ընդլայնված պլենումներում գյուղական և կոլտնտեսային ակտիվի մասնակցությամբ: Բացի այդ պետք է անցկացվեն հասարակական ակտիվի (կոմսոմոլի, պրոֆմիությունների և մյուս հասարակական կազմակերպությունների) հատուկ լայն ժողովներ: Այդ ժողովներում ակտիվին պետք է ծանոթացվի փոխառության պայմանների և նրա տարածման կարգի հետ: Ակտիվից զատվում են դեկուցողների կադրեր—ագիտատորներ, վորոնք կցվում են վորոշ գյուղխորհուրդների, կոլտնտեսությունների, կոլեկտիվների. պետք է փոխառության աշխատանքը ներգրավել արձակուրդավորներին—բանվորներին, պետք է թարմացվեն և ամրապնդվեն կապերը շեֆ կազմակերպությունների հետ:

9· Շրջանային թերթը պետք է դառնա խնայողական աշխատանքի կազմակերպիչը, իր եջերում լայնորեն լուսաբանելով աշխատանքի ընթացքը, ահազանգ տալով նրա (աշխատանքի) բոլոր թերությունների համար, դրսեվորելով աշխատանքի լավագույն որինակները: Փոխառության կամպանիան պետք է լայն լուսաբանություն գտնի արտադրական և կոլտնտեսային լրագրերում, ինչպես նաև յուրաքանչյուր խրճիթ-ընթերցարանի, ժողտան, խորտնտեսության, գյուղխորհրդի պատի լրագրում և այլն:

## Ապարատի նախապատրաստելը

10· Կամպանիայի սկսելուց առաջ Շրջֆինբաժինը շրջանի բոլոր գյուղխորհուրդները բաշխում է շրջխնայգրամարկղի և Պետբանկի բաժանմունքի մեջ փոխառության գործով սպասարկելու համար: Շրջխնայգրամարկղին առաջին հերթին ամրացվում են այն գյուղխորհուրդները, վորոնց տերիտորիայում գտնվում են վոչ ցածր գործակալական առաջին կարգից խնդրամարկղներ: Շրջխնայգրամարկղների, գյուղխնայգրամարկղների և Պետբանկի բաժանմունքների մեջ բաշխվում են նմանապես կոլտնտեսությունները, բանվորների և ծառայողների այն կոլեկտիվները, վորոնք գտնվում են շրջանի տերիտորիայում: Յուրաքանչյուր վարկային հիմնարկություն պատասխանատու յե փոխառության աշխատանքի դրվածքի համար այն գյուղխորհուրդներում, կոլտնտեսություններում և կոլեկտիվներում, վորոնք ամրացված են իրեն: Կոլտնտեսությունների և կոլեկտիվների բաշխումը կատարում է Շրջֆինբաժինը շրջխնայգրամարկղի և Պետբանկի բաժանմունքի համաձայնությամբ:

Շրջխնայդրամարկղն ապահովում է ագիտացիոն գրականության հայթայթումը, իսկ փոխառության վերաբերյալ ոպերատիվ նյութերով՝ Պետբանկի բաժանմունքը, մյուս հիմնարկները և այլ կազմակերպություններ, վորոնք ներգրավվել են կամպանիային մասնակցելու համար: Յուրաքանչյուր վարկային հիմնարկություն ժամանակին հայթայթում է իրեն ամրացված կոլտնտեսությունների և կոլեկտիվների ոժանդակող հանձնաժողովին ագիտացիոն գրականություն յեվ բաժնեգրման թերթիկներ: Գյուղխորհրդին կից ոժանդակող հանձնաժողովներին նույնպես պետք է հայթայթել անհրաժեշտ ագիտացիոն գրականություն: Շրջխնայդրամարկղը և Պետբանկի բաժանմունքը անցկացնում են գյուղխորհուրդների, կոլտնտեսությունների վարչությունների և ոժանդակող հանձնաժողովների ամենօրյա հրահանգություն փոխառության տարածման իրենց աշխատանքների մասին ( աջակցող հանձնաժողովների ներկայացուցիչների, գյուղխորհուրդների խորհրդակցություններ աշխատակիցների շրջագայելը հրահանգելու համար յեվ այլն):

Գյուղխորհուրդները նշում են այն ակտիվիստների ցուցակը, վորոնք պիտի ներգրավվեն վորպես կոնտրագենտներ մենատնտեսներին պարտատոմսեր ծախելու համար: Կոլտնտեսությունների վարչությունները նշում են թեկնածուներ իրենց կազմից յեվ կոլտնտեսային ակտիվից վորպես գյուղխորհրդի լիազորների կոլտնտեսականներից մուծումները հավաքելու համար: Գյուղխորհուրդը կոնտրագենտներին և լիազորներին աշխատանքի յե կանչում, հետ է վերցնում նրանցից գրավոր պարտավորությունը և հրահանգում է նրանց:

## IV ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ԲԱՑՈՒՄԸ ՅԵՎ ՆՐԱ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

### Փոխառության տարածման ժամկետները գյուղում

11. Փոխառության տարածումը գյուղական բնակչության մեջ ժամանակի տեսակետից պետք է կապակցվի գյուղատնտեսական մթերումների կամպանիայի հետ: Գյուղատնտեսական մթերումների ժամկետներին հարմարեցրած յերկրային և մարզային գործկոմները առանձին շրջանների համար սահմանում են փոխառության տարածումի սկսելու ժամկետ գյուղական բնակչության մեջ: Փոխառության տարածման կամպանիան գյուղացիների մեջ պետք է վերջանա 1931 թ. դեկտեմբերի 15-ին *):



### Մասսայական աշխատանք

12. Փոխառության տարածման սկսելու հետ կազմակերպվում են մասսայական ժողովներ ինչպես առանձին կոլտնտեսությունների, կոլտնտեսականների, նմանապես և առանձին գյուղերի մենատնտեսների: Ժողովները պետք է պատշաճ կերպով նախապատրաստված լինեն: Ընդհանուր ժողովին նախորդում է ակտիվի և չքավորության ժողովը: Զեկուցողները պետք է պատրաստված լինեն: Ձեռք են առնվում միջոցներ, վորոնք ապահովում են ժողովին լրիվ ներկայանալը և ժողովականների ակտիվությունը:

13. Մասսայական աշխատանքների հիմնական մեթոդները պետք է լինեն՝ սոցմրցումը և հարվածայնությունը: Սոցմրցումն անցկացվում է առանձին կոլտնտեսությունների, կոլտնտեսականների, գյուղխորհուրդների և առանձին ակտիվիստների մեջ: Լայնորեն կիրառվում է նմանապես և հասարակական բուքսիրի մեթոդը (հետ մնացող կետերի և կազմակերպությունների առաջ տանելը աշխատանքը շատ լավ անցկացնողների կողմից): Հենվելով մասսայական աշխատանքի վրա, ապարատը ձեռնարկում է փոխառության տարածմանը:

## V ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՄԸ ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ՄԵՋ

### Կոլտնտեսականների բաժնեգրման պայմանները փոխառության պարտատոմսերին

14. Կոլտնտեսականները փոխառության պարտատոմսեր ձեռք են բերում կոլեկտիվ բաժնեգրման կարգով: Կոլտնտեսականների կողմից բաժնեգրված պարտատոմսերի արժեքի վճարումը կատարվում է միանվագ կամ ժամկետներով, ինչպես կցանկանան բաժնեգրվողները: Ժամկետի տևողությունը կոլտնտեսականների համար սահմանում է Շրջգործկոմը, նայած տեղական պայմաններին, շրջանի բոլոր կոլտնտեսությունների համար այն հաշվով, վորպեսզի բաժնեգրման վերջնական հաշվարկը կատարվի մինչև 1932 թ. մար-

*) Վերջին հրահանգների համաձայն կամպանիան գյուղում հիմնականում ավարտվելու է ոգոստոսի 1-ին:

*տի 1-ը և վորպեսզի բաժնեգրված ամբողջ գումարի կեսը (50 %) մուտք լինի մինչև 1932 թ. հունվարի 1-ը:*

*Բաժնեգրման առաջին մուծումը պետք է մուտք լինի վոչ ուշ քան բաժնեգրումից մի ամիս հետո: Ի մուծումն բաժնեգրության գումարի յերկրորդ կեսի 1932 թվում կատարվող մուծումները բաշխվում են այնպես, վորպեսզի այդ մուծումներից առաջինը մուտք լինին մինչև 1932 թ. փետրվարի 1-ը: Կոլտնտեսականների ընդհանուր ժողովը սահմանում է իր կոլխոզի համար հերթական մուծումների չափը և ժամանակը վերը մատնանշված ժամկետների սահմաններում: Կոլտնտեսականների ընդհանուր ժողովների այդ վորոշումների մասին ոժանդակող հանձնաժողովները հաղորդում են գյուղխորհրդին: Գյուղխորհուրդը բաժնեգրվողներից մուծումները դանձելու ժամանակ ղեկավարվում է կոլտնտեսականների ընդհանուր ժողովների վորոշումներով:*

*Կոլտնտեսականներին պարտատոմսեր վաճառելը կատարվում է անվանական (պարտատոմսերի վրա մատնանշված) գնով:*

15. *Ժամկետներով բաժնեգրված բաժանորդը առաջին մուծումը վճարելուց հետո իրավունք ունի ստանալու գնած պարտատոմսերի յեկամուտը (շահումներով և տոկոսներով) միայն այն պայմանով, յեթե ժամանակին մուծի պարտատոմսի վճարները:*

*Փոխառության շահող մասի պարտատոմսերին բաժնեգրվողին ամրացվում են պարտատոմսերը առաջին մուծումից հետո: Առաջին մուծումից հետո բաժնեգրվողին տրվում են ամրացման տալոններ պարտատոմսերի համարներով շահումների խաղարկությունների մասնակցելու համար: Տալոնում մատնանշված պարտատոմսը տրվում է բաժնեգրվողին պարտատոմսի ամբողջ արժեքը վճարելուց հետո: Տալոնները կորցնելու դեպքում բաժնեգրվողը գյուղխորհրդի միջոցով վարկային հիմնարկությունից ստանում է ամրացված պարտատոմսերի համարները:*

*Փոխառության տոկոսային մասի պարտատոմսերի ամրացում չի կատարվում, վորովհետև մինչև բաժնեգրվողների հետ հաշվառքը վերջացնելը տոկոսային մասի մարման տիրաժներ չպիտի լինի: Բաժնեգրվողները տոկոսային մասի պարտատոմսերը ստանում են վերջիններիս ամբողջ արժեքը վճարելուց հետո:*



## Ինչպե՞ս է անցկացվում բաժնեգրությունը կոլտնտեսականների մեջ.

16. *Փոխառության մասսայական աշխատանքի և փոխառության բաժնեգրելը կոլտնտեսականների մեջ անցկացվում են կոլտնտեսականներին կից ոժանդակող հանձնաժողովները: Կոլտնտեսությունների վարչությունները պետք է ապահովեն ոժանդակող հանձնաժողովներին ակտիվ աշխատանքը և նրանց ցույց տան ամեն տեսակի աջակցություն բաժնեգրման անցկացման գործում: Կոլտնտեսային ոժանդակող հանձնաժողովները պետք է կոլտնտեսականներին լայնորեն պարզաբանեն փոխառության նշանակությունը, պայմանները. Կոլտնտեսականների ընդհանուր ժողովում դնել փոխառության հարցը, կազմակերպել խմբակային և անհատական զրույցներ փոխառության մասին, տարածել ագիտացիոն գրականություն և այլն: Կոլտնտեսականների մեջ բաժնեգրությունն անցկացնելու ժամանակ լայնորեն կիրառվում են մասսայական աշխատանքի մեթոդները (սոցմրցում, հարվածայնություն, հասարակական բուկսիր, հանդիպական պլան և այլն): Փոխառության մասսայական աշխատանքին մասնակցելու համար ոժանդակող հանձնաժողովները լայնորեն ներգրավում են հասարակական հրահանգիչներին:*

*Բաժնեգրությունն անցկացվում է յուրաքանչյուր կոլտնտեսականին հարցում անելու միջոցով: Բաժնեգրությունն ընդունվում է ինչպես ընդհանուր ժողովում, նմանապես և ժողովից հետո—կոլտնտեսականների մեջ շրջագայելու միջոցով: Շրջագայության համար ընտրվում են ոժանդակող հանձնաժողովի անդամները, հասարակական հրահանգիչները և կոլտնտեսային ակտիվը:*

*Հարցման ժամանակ լրացվում է բաժնեգրման թերթիկը* (ձև № 3): *Բաժնեգրման հայտարարած գումարը յուրաքանչյուր կոլտնտեսական հաստատում է իր ստորագրությամբ բաժնեգրման թերթիկի վրա: Բաժնեգրվողը կարող է իր ցանկությամբ բաժնեգրվել կամ փոխառության անտոկոս պարտատոմսերին կամ թե յերկու տեսակին էլ (տոկոսաբեր վոչ շահող և վոչ տոկոսաբեր շահող):*

*Բաժնեգրությունն անցկացնելուց հետո ոժանդակող հանձնաժողովը լրացրված բաժնեգրման թերթիկները հանձնում է գյուղխորհրդի բաժնեգրվողներից հասանելիք վճարները դանձելու և*

բաժնեգրությունը վարկային հիմնարկության ընկերության մեջ ձևակերպելու համար։ Ինքն ոժանդակող հանձնաժողովը բաժնեգրության վերաբերյալ վոչ մի դրամական հաշվարկում չի կատարում։

Կոլտնտեսականների բաժնեգրման հաշվարկների հանձնումը գյուղխորհուրդներին յերբեք չի վերացնում պատասխանատվությունը կոլտնտեսությունների վարչություններից և ոժանդակող հանձնաժողովներից մուծումների ժամանակին մուտք լինելը կոլտնտեսականներից։ Կոլտնտեսությունների վարչությունները և ոժանդակող հանձնաժողովները պարտավոր են գյուղխորհրդին ցույց տալ ակտիվ աջակցություն մուծումների հավաքման գործում, նրանք պետք է կոլտնտեսականների մեջ անցկացնեն մշտական մասսայական աշխատանք պարտատոմսերի մուծումները ժամանակին վճարելու հարցի շուրջը։

## Ինչպե՞ս է կազմակերպում գյուղխորհուրդը պարտատոմսերի դիմաց հասանելիք մուծումների գանձումը կոլտնտեսականներից

17. Գյուղխորհուրդը մուծումների գանձումը կոլտնտեսականներից կազմակերպում է լիազորների միջոցով։ Կոլտնտեսության վարչության ոժանդակող հանձնաժողովի հետ միասին իր կողմից և կոլտնտեսային ակտիվից հանձնարարում է լիազորների

Յուրաքանչյուր լիազոր գյուղխորհրդին տալիս է գրավոր պարտավորություն № 1-ա ձևով։ Պարտավորությունը ստորագրվում է 2 որինակից, վորից մեկը պահվում է գյուղխորհրդում, իսկ յերկրորդ որինակը ստանում է լիազորը։ Պարտավորության հակառակ յերեսի վրա տեղավորված է լիազորի անձնական հաշվի ձևը։ Լիազորի հավաքած մուծումները գյուղխորհուրդն արձանագրում է անձնական հաշվում պարտավորության յերկրորդ որինակի մեջ, նշելով փողի ընդունման ժամանակը լիազորից։

Լիազորի մոտ գտնվող պարտավորության (обязательство) մեջ անցկացված գրանցումը գյուղխորհուրդը հաստատում է իր ստորագրությամբ։

## Ինչպե՞ս է գյուղխորհուրդը հաշվառում կոլտնտեսականների մուծումների մուտքը

18. Մուծումների ամբողջ հավաքման ժամանակ գյուղխորհուրդը յուրաքանչյուր լիազորին ամրացնում է մի կոլտնտեսության բաժնեգրվողների վորոշ խմբակ։ Հաշվառման ժամանակ



գյուղխորհուրդը կազմում է բաժնեգրման թերթիկի հիման վրա առանձին հաշվետվության տեղեկագիր № 3-ա ձևով։ Միաժամանակ գյուղխորհուրդը յուրաքանչյուր բաժնեգրվողի համար լրացնում է հաշվարկման անդորրագիրը նրա արմատը № 3 ձևով։ Անդորրագրերը (և նրանց արմատները) համարգրվում են համարների կարգով, վորոնց տակ բաժնեգրողները նշանակած են հաշվարկման տեղեկագրում։

Մի կոլտնտեսության բոլոր բաժնեգրվածների տեղեկագրերը միացվում են իրար և պահվում գյուղխորհրդում այն կարգով, վոր սահմանված են դրամական փաստաթղթերի պահելու համար։ Անդորրագրերը և արմատները նախ քան լիազորներին հանձնելը պահվում են գյուղխորհրդում դասավորված ըստ կոլտնտեսությունների և առանձին լիազորների։ Առաջին մուծումը հավաքելու համար գյուղխորհուրդը լիազորին տալիս է անդորրագրերը և նրանց արմատները։ Մուծումը լրանալուց հետո անդորրագրերի այդ արմատները գյուղխորհուրդը հանձնում է լիազորներին յուրաքանչյուր հաջորդ մուծումը հավաքելու համար։

## Ինչպես է հավաքում լիազորը բաժնեգրվածներից մուծումները

19. Բաժնեգրվողից մուծումը ստանալու ժամանակ լիազորն արձանագրում է հաշվարկման անդորրագրում մուծման գումարը և վճարման որը, իսկ անդորրագրի արմատի մեջ—միայն մուծման գումարը, նմանապես և նրա վճարման որը։ Անգրագետ բաժնեգրվողի փոխարեն ստորագրում է մուծման վճարման ժամանակ ներկա յեղողներից վորևէ մեկը։

Լիազորը պարտավոր է հետևել, վորպեսզի բաժնեգրվածները անդորրագրերի արմատների վրա իրենց ստորագրություններով հաստատեն մուծման գումարները և նշանակեն վճարման որը։ Դա անհրաժեշտ է, վորպեսզի գյուղխորհուրդը կարողանա հսկել լիազորների կողմից հավաքված դրամների ճիշտ և ժամանակին հանձնելուն։

## Ինչպե՞ս է հանձնում լիազորը հավաքած մուծումները գյուղխորհրդին

20. Յուրաքանչյուր բաժնեգրվողից ստացած մուծումը լիազորը պարտավոր է հանձնել գյուղխորհրդին փողն ստանալուց վոչ ուշ յերեքորյա ժամկետում։ Հավաքված փողերը լիազորը հանձնում է գյուղխորհրդին անդորրագրերի արմատների հետ միասին։

Գյուղխորհուրդը անդորրագրերի արմատներով ստուգում է փողի գումարները, որ հանձնել է լիազորը և այդ գումարը գրանցում է լիազորի անձնական հաշվի մեջ (պարտավորության օրինակի հակառակ յերեսի վրա, որ ներկայացրել է լիազորը և գյուղխորհրդում պահվող օրինակի վրա)։ Անդորրագրերի արմատներից գյուղխորհուրդը բաժնեգրվողներից մուտք յեղած մուծումները գրանցում է հաշվետվության տեղեկագրի մեջ (ձև № 3-ա)։

## Լիազորների պատասխանատվությունը գյուղխորհրդի առաջ

21․ Լիազորները գյուղխորհրդի առաջ կրում են նյութական պատասխանատվություն գյուղխորհրդից ստացած ամրացման տալոնների և պարտատոմսերի ապահովության համար, տալոնների և պարտատոմսերի ժամանակին և ճիշտ հանձնման համար բաժնեգրվողներին։

## Ինչպես է գյուղխորհուրդը ձևակերպում կոլտնտեսականների բաժնեգրությունը վարկային հիմնարկության մեջ

22․ Բոլոր բաժնեգրվածներից առաջին մուծումը հավաքելուց հետո գյուղխորհուրդը ձևակերպում է կոլտնտեսականների բաժնեգրությունն այն վարկային հիմնարկությունում, որին գյուղխորհուրդն ամրացված է փոխառության սպասարկման համար։ Բաժնեգրվածներից հավաքած առաջին մուծումները գյուղխորհուրդը հանձնում է վարկային հիմնարկության բաժնեգրման թերթիկների և կոլտնտեսականների բաժնեգրման ընդհանուր գումարի հայտի հետ միասին։ Բաժնեգրման թերթիկների հիման վրա կազմվող հայտի մեջ գյուղխորհուրդը մատնանշում է, թե փոխառության յուրաքանչյուր տեսակի պարտատոմսերի ինչ ընդհանուր գումարի յեն բաժնեգրվել կոլտնտեսականները գյուղխորհուրդների տերիտորիայում։

Կոլտնտեսականների բաժնեգրման առաջին մուծումն ստանալու ժամանակ վարկային ընկերությունը գյուղխորհրդին տալիս է հաշվարկային անդորրագիր (ձև № 5), որը դուրս է գրվում գյուղխորհրդի անունով։ Այդ անդորրագրի մեջ վարկային հիմնարկությունը նշում է գյուղխորհրդից մուտք յեղող բոլոր գումարները ի մարումն կոլտնտեսականների ձևակերպված բաժնեգրության։

## Պարտատոմսերի ամրացնելը բաժնեգրվածներին

23․ Վարկային հիմնարկությունը փոխառության շահումային մասի պարտատոմսերն ամրացնում է բաժնեգրվածներին և տո-



կոսային մասի պարտատոմսերն ընտրում է գյուղխորհրդի կողմից հանձնված բաժնեգրման թերթիկների հիման վրա։ Բաժնեգրվածներին ամրացվում են 10 և 5 ռուբլիանոց պարտատոմսեր բաժնեգրման գումարի համապատասխան։ Ամրացման այն տալոնները, որոնք ջոկվել և դրվել են ծրարների մեջ յուրաքանչյուր բաժնեգրվողի համար, վարկային հիմնարկությունը հանձնում է գյուղխորհրդին։ Գյուղխորհուրդը հանձնարարում է լիազորներին բաժանել տալոնները բաժնեգրվածների մեջ շրջագայելու ժամանակ նրանցից հերթական մուծումը ստանալու համար։ Բաժնեգրվողը պետք է ստորագրի տալոնների ստացման մասին հաշվարկային անդորրագրի արմատի վրա։ Տալոնները բաժանելուց հետո գյուղխորհուրդը ստորագրում է անդորրագրերի արմատների վրա յեղած այդ ստորագրությունների առկայությունը։

Ինչպես պարտատոմսերի ամրացումը նմանապես և բաժնեգրվածներին տալոններ հանձնելը պետք է կատարվեն այն հաշվով, որպեսզի մինչև խաղարկությունը բոլոր բաժնեգրվածները ստանան ամրացման տալոններ։

## Պարտատոմսերի հանձնումը բաժնեգրվածներին

24․ Բաժնեգրվածներից պարտատոմսերի ամբողջ արժեքը ստանալուց հետո և գյուղխորհուրդը կոլտնտեսականների բաժնեգրության վերաբերյալ հաշվարկումները վերջացնելուց հետո, այսինքն 1932 թ. մարտի 1-ից հետո և տասնօրյա ժամկետից վոչ ուշ, վարկային հիմնարկությունը հանձնում է գյուղխորհրդին լրիվ վճարված պարտատոմսերը, որոնք դրված են ծրարների մեջ յուրաքանչյուր ավանդատուի համար։ Գյուղխորհուրդն անհապաղ լիազորների միջոցով պարտատոմսերը հանձնում է բաժնեգրվածներին։ Բաժնեգրվողը հանձնում է իր մոտ յեղած ամրացման տալոնները և հաշվարկման անդորրագրերը (ձև №3 բ) և պարտատոմսերի ստացման համար ստորագրում է հաշվարկային անդորրագրերի արմատի վրա։ Անդորրագրերի արմատները պարտատոմսերի ստացման համար բաժնեգրվածների ստորագրությունների հետ միասին լիազորները հանձնում են գյուղխորհրդին։ Գյուղխորհուրդն անդորրագրերի արմատներով պետք է ստուգի պարտատոմսերի ստացման համար տրված ստորագրությունների առկայությունը։

Տալոնները հանձնվում են վարկային ընկերության։ Գյուղխորհուրդն ինքը կարող է պարտատոմսերը բաժանել բաժնեգրվածներին։ Հաշվարկային անդորրագրերը (և նրանց արմատները) և

հաշվետվության տեղեկագրերը պահվում են գյուղխորհրդում յերեք տարի:

Այն դեպքերում, յերբ կոլտնտեսականները բաժնեգրման հաշվարկումների ժամանակ գնած պարտատոմսերի արժեքը վճարում են միանվագ, գյուղխորհուրդը վարկային հիմնարկությունից ստանում է պարտատոմսերը և հանձնում այն այդ բաժնեգրվածներին:

## VI. ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՄԸ ՄԵՆԱՏՆՏԵՍՆԵՐԻ ՄԵՋ

### Պարտատոմսերի վաճառքի պայմանները մենատնտեսներին

25. Պարտատոմսերի վաճառքը մենատնտես գյուղացիների մեջ կատարվում է կանխիկ, առանց ժամկետների: Պարտատոմսերի կանխիկ վաճառքը կատարվում է անվանական (պարտատոմսի վրա նշանակված) գնով:

Արտադրական- սպառողական արտելների մեջ մտնող մենատնտեսներին պարտատոմսերը նույնպես վաճառվում են կանխիկ:

### Ինչպե՞ս են անցկացնում գյուղխորհուրդները մենատնտեսներին պարտատոմսեր վաճառելու աշխատանքը

26. Գյուղխորհուրդները գյուղական աջակցող հանձնաժողովի հետ միասին անցկացնում են ագիտացիոն-մասսայական աշխատանք մենատնտեսների մեջ հենվելով առաջին հերթին կոլտնտեսական սեկտորի ՄՏԿ և խորհտնտեսությունների վրա: Փոխառության տարածման հիմնական մեթոդը մենատնտեսների մեջ պետք է լինի ծխային (подворный): Ծխային շրջագայությունները անցկացնելու համար կանչվում են բրիգադներ գյուղական ակտիվից (կոմյերիտ, ուսուցիչները, խրճիթվարները, հասարակական հրահանգիչները և այլն): Ծխային շրջագայությանը նախորդում է գյուղական օժանդակող հանձնաժողովի ընդլայնված նիստը ակտիվի հետ, չքավորական ժողովը և գյուղացի մենատնտեսների ընդհանուր ժողովը: Այդ ժողովներին պետք է կանչել կոլտնտեսականներին, վորոնք իրենց ելույթներով, կոչերով և սոցմրցման և այլ առաջարկություններով պետք է նպաստեն փոխառության հաջող տարածմանը մենատնտեսների մեջ: Կուլակների մեջ փոխառության տարածումը կատարվում է նրանց կայուն առաջադրանքներ տալու կարգով: Կուլակային առանձին տնտեսությունների համար կայուն առաջադրանքները ուրվագծում են գյուղական աջակցող հանձնաժողովները կոլտնտեսականներին և չքավորական ակտիվի հետ միասին: Այն կուլակների նկատմամբ, վորոնք չեն կատարի առաջադրությունը, ձեռք են առնվում հասարակական ներգործության միջոցներ մինչև հասարակական բոյկոտ կազմակերպելը:

27. Գյուղխորհուրդները մենատնտեսներին պարտատոմսեր են վաճառում իրենք և այն կոնտրագենտների միջոցով, վորոնք կանչվում են գյուղակտիվից (խրճիթվարները, ուսուցիչները, գյուղատնտեսները, ակտիվիստ կոլտնտեսականները և այլն): Գյուղական խնայդրամարկղները պարտատոմսերի վաճառքն անց են կացնում կանխիկ, գյուղխորհրդի ղեկավարությամբ, պարտատոմսերն ստանալով շրջխնայդրամարկղներից և հաշիվ տալով նրանց տարածված պարտատոմսերի համար: Գյուղխորհուրդը սահմանում է կոնտրագենտների և գյուղական խնայդրամարկղների համար աշխատանքի շրջաններ փոխառության իրացման համար մենատնտեսների մեջ: Յուրաքանչյուր կոնտրագենտ և գյուղական խնայդրամարկղ անցկացնում են մենատնտեսներին պարտատոմսեր վաճառելու աշխատանքը հատկացված շրջանում:

Ակտիվի կոնտրագենտները գյուղխորհրդի պարտավորության ստորագրություն են տալիս ձև № 1-ով: Պարտավորությունը ստորագրվում է յերկու օրինակից, վորոնցից մեկը պահվում է գյուղխորհրդում, յերկրորդը — հանձնվում է կոնտրագենտին: Պարտավորության հակառակ յերեսի վրա կա անձնական հաշվի ձև, վորի մեջ գյուղխորհուրդն արձանագրում է պարտավորության յերկու օրինակի վրա կոնտրագենտից ստացված գումարները և կոնտրագենտին տրված պարտատոմսերը.

### Գյուղխորհուրդներին պարտատոմսեր հայթայթելը մենատնտեսներին վաճառելու համար

28. Գյուղխորհուրդը մենատնտեսներին վաճառելու պարտատոմսեր է ստանում այն վարկային հիմնարկությունից, վորին կցված է գյուղխորհուրդը: Պարտատոմսերը գյուղխորհուրդներին տրվում են կանխավճարով: Կանխավճարը լրացվում է նրա ծախսման չափով այն հաշվով, վորպեսզի գյուղխորհուրդը կարողանա վարել առանց ընդհատումի պարտատոմսերի տարածման աշխատանքը: Մենատնտեսների մեջ տարածելու համար նշանակված են առավելապես տաս ռուբլիանոց պարտատոմսեր: Այդ պարտատոմ-

ների ցուցակից դուրս պետք է գյուղ. ուղարկվեն և հինգ ռուբլիանոց պարտատոմսեր, որոնք տրվում են գնորդներին, որպես լրացում 10 ռուբլիանոց պարտատոմսի 15,25 ռուբլու փոխառություն գնելու դեպքում և այլն: Պետբանկի շրջանային բաժանմունքը պետք է կտրի ամրացման տալոնները պարտատոմսերից, որոնք նշանակված են կանխիկ վաճառքի համար:

## Կոնտրագենտների հաշվարկումները գյուղխորհրդի հետ

29. Կոնտրագենտները պարտատոմսերի վաճառումից գոյացած գումարները հանձնում են գյուղխորհրդին յուրաքանչյուր 10 օրը մի քանի յուրաքանչյուր ամսի 1, 11 և 21-ին:

*ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ:* Հետագա հրահանգների համաձայն գումարը հանձնվում է հնգօրյակներով:

## Կոնտրագենտների պատասխանատվությունը

30. Կոնտրագենտները գյուղխորհրդի առաջ կրում են նյութական պատասխանատվություն այն գումարների ապահովության համար, որ գոյացել են պարտատոմսերի վաճառումից և գումարը ժամանակին գյուղխորհրդին հանձնելու համար, նմանապես և գյուղխորհրդից ստացած պարտատոմսերի ապահովության համար:

# VII. ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎՈՂ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՎ ՀԱՇՎԱՐԿՈՒՄՆԵՐԸ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

## Փոխառության պարտատոմսերի հաշվառումը

31. Գյուղխորհրդի կողմից կանխիկ վաճառելու համար ստացված պարտատոմսերի հաշվառումը տարվում է ձև №2 տեղեկագրում: 1,2 և 3-րդ սյունյակներում գրանցվում են պարտատոմսերը. ա) վարկային հիմնարկությունից ստացված բ) գյուղխորհրդի կոնտրագենտների կողմից վերադարձված, մատնանշելով 2-րդ սյունյակում կոնտրագենտի ազգանունը և անունը: 4,5 և 6-րդ սյունյակներում գրանցվում են պարտատոմսերը. գ) գյուղացիներին կանխիկ վաճառվածը. դ) կոնտրագենտներին ստացականով տրվածը 7-րդ սյունյակում և ե) վարկային հիմնարկություն վերադարձվածը:

32. Կոնտրագենտներին տրված պարտատոմսերի հաշվառումը գյուղխորհուրդը տանում է կոնտրագենտի անձնական հաշվում (տես ձև № 1 պարտավորության հակառակ երեսի վրա), գրանցե-



լով յերկրորդ սյունյակում տրված պարտատոմսերի անվանական արժեքը, իսկ 4-րդ սյունյակում—կոնտրագենտների կողմից վերադարձվող պարտատոմսերը. այդ գրանցումը հաստատվում է գյուղխորհրդի ստորագրությամբ:

## Փոխառության իրացումից մուտք յեղած դրամական գումարների հաշվառումը

33. Կոլտնտեսականների բաժնեգրությունից մուտք յեղած դրամական գումարները գյուղխորհուրդը գրանցում է ձև №3 հաշվարկային տեղեկագրի մեջ և լիազորների մուծումների գանձման անձնական հաշիվների մեջ, ինչպես մատնանշված է 17-րդ հոդվածում:

34. Կոնտրագենտներից պարտատոմսերի կանխիկ վաճառումից մուտք յեղած դրամական գումարները գյուղխորհուրդը գրանցում է կոնտրագենտների անձնական հաշիվներում սյունյակ №3-ի մեջ, հանելով պարտքի մնացորդը ամեն մի այդպիսի գրանցումից հետո 5-րդ սյունյակի մեջ: Այդ գրանցումները հաստատվում են գյուղխորհրդի ստորագրություններով: Փոխառության մուտք յեղած բոլոր գումարները որպես ընդհանուր համարներով գյուղխորհուրդը մուտք է անում գյուղխորհրդի դրամական (դրամարկղային) գրքի «այլ գումարների» սյունյակում: Իսկ այդ գումարները գրանցվում են «զանազան գումարների» (ինքնուրույն բյուջե ունեցող գյուղխորհուրդներում)— «զանազան անձանց և հիմնարկությունների հետ ունեցած հաշվարկումների» գրքում, սակայն կոլտնտեսականների բաժնեգրությունից մուտք յեղած և մենատնտեսներին կանխիկ վաճառած պարտատոմսերից գոյացած գումարները պահելով առանձին-առանձին: Դրա համար «զանազան գումարների» գրքում բացվում են յերկու առանձին հաշիվ:

35. Գյուղական խնայդրամարկղներին հանձնված կամ փոստով շրջանային դրամարկղին կամ թե Պետբանկի շրջանային բաժանմունքին ուղարկված գումարները (նայած գյուղխորհրդի կցված լինելուն), ելք գրվում են ինչպես «դրամարկղային գրքում», նմանապես և «զանազան գումարների» գրքում:

36. Փոխառության պարտատոմսերը, նմանապես և փոխառությունից իրացված դրամները մինչև վարկային ընկերության հանձնելը կամ ուղարկելը, պահվում են ընդհանուր կարգով, որ սահմանված է գյուղխորհուրդների դրամական գումարների պահպանելու համար:

## Հաշվարկումներ վարկային հիմնարկների հետ

37. Գյուղական խնայդրամարկղին ամրացված գյուղխորհուրդները փոխառության վերաբերյալ մուտք լեղած գումարները հանձնում են այդ խնայդրամարկղը վոչ ուշ, քան հետևյալ որը փողն ստացվելուց հետո։

Փողը հանձնելու ժամանակ ամեն անգամ ներկայացվում է խնայդրամարկղի կողմից առաջին մուծումն ընդունելուց հետո գյուղխորհրդին տրված կոլտնտեսականների բաժնեգրման վերաբերյալ հաշվարկային անդորրագիրը: Դրամները գանձվում են հետևյալ ձևի հայտարարությամբ.

«Հնգամյակը չորս տարում» փոխառության յերկրորդ մասի թողարկման . . . . . . . գյուղխորհրդից
կոլտնտեսականների կոլեկտիվ բաժնեգրությամբ . . ռուբլի
Գյուղխորհրդի և գյուղական ակտիվի միջոցով
կանխիկ վճարված . . . . . . . . . . . ռուբլի

ընդամենը . . . ռուբլի

Թիվ ամիս, տարի, գյուղխորհրդի ստորագրությունը.

38. Շրջխնայդրամարկղին կամ Պետբանկի բաժանմունքներին ամրացված գյուղխորհուրդներն ուղարկում են նրանց յուրաքանչյուր ամսի 1,6,11,16,21, և 26-ին անցած 5 օրում մուտք լեղած բոլոր դրամական գումարները: Փոստային փոխադրության մեջ մատնանշվում է առաքվող գումարների բաշխումը մենատնտեսների վճարված և կոլտնտեսականների բաժնեգրության վերաբերյալ. (հոդ. 37): Այդ դեպքում կոլտնտեսականների բաժնեգրության հաշվարկային անդորրագրի մեջ (ձև №5), վոր ստացված է վարկային ընկերությունից առաջին մուծումը վճարելուց հետ, գյուղխորհուրդն ինքն է գրանցում կոլտնտեսականների մուծումների գումարները, վորոնք ուղարկվել են վարկային ընկերության: Գյուղխորհրդի այդ գրանցումները ստուգվում և հաստատվում են ստորագրություններով և կնիքով, յերբ գյուղխորհրդի ներկայացուցիչը մոտակա որերում ներկայանում է վարկային հիմնարկություն:

39. Փողի փոխադրությունը փոստով Պետբանկի հիմնարկների հասցեներով կատարվում է ձրի: Շրջխնայդրամարկղների հասցեներով ուղարկվող գումարների հետ կապված ծախսերը գյուղխորհուրդներն առաջարկում են փոստային հիմնարկության պահել փոխադրվող գումարից, սակայն իրենք փոխադրության ութիվ դրած նամակում մատնանշում են այն գումարը, վոր հանձնվել է փոստին, լրիվ առանց դուրս գալու փոստային ծախսերը:



40. Պարտավորագրերի պատրաստի բլանկները (ձևեր №№ 1 և 1 ա) պարտատոմսերի մուտքի–յելքի տեղեկագիրը (ձև № 2), բաժնեգրման վերաբերյալ կոլտնտեսականների հետ հաշվարկում կատարելու տեղեկագիրը ձև № 3 ա) և հաշվարկային անդորրագիրը (ձև № 3 բ) գյուղխորհուրդն ստանում է այն վարկային հիմնարկությունից, վորին նա կցված է: Այդ ձևերը կցված են սույն հրահանգին:

Յուրաքանչյուր վարկային հիմնարկություն, վորին կցված են գյուղխորհուրդները, պարտավոր է իր պատասխանատվությամբ ունենալ մշտական հսկողություն փոխառության վերաբերյալ գյուղխորհուրդների հաշվարկումների դրության վրա, հրահանգել գյուղխորհուրդներին այդ հաշվարկումները տանելու մասին և ցույց տալ գյուղխորհուրդներին մշտական գործնական օգնություն փոխառության հաշվարկային աշխատանքին. գյուղխորհուրդների հետ պետք է ուսումնասիրվի սույն հրահանգը:

### Գյուղխորհուրդների պատասխանատվությունը ՑԺԿ–ի մարմինների առաջ.

42. Գյուղխորհուրդները կրում են նյութական պատասխանատվություն ՑԺԿ-ի մարմինների առաջ պարտատոմսերի ամբողջության, ապահովության և պարտատոմսերի դիմաց ստացված դրամների համար:

## VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՄՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑՔԻ ՎՐԱ

43. Փոխառության կամպանիայի և երացված մուծումների ընթացքի վրա, պարտատոմսերի հաշվարկումների ամբողջ ժամանակընթացքում սահմանվում է ամենախիստ հսկողություն փոխառության դրամների շարժման ընթացքի վրա, սկսած գյուղխորհուրդների լիազորներից և կոնտրագենտներից մինչև Պետբանկի հիմնարկությունները: Գրանցումների ժամանակին և ճիշտ կատարվելը լիազորների, կոնտրագենտների, գյուղխորհուրդների և խնադրամարկղների կողմից դրամների ժամանակին հանձնելը ստուգելու համար պարբերաբար պետք է կազմակերպվեն հասարակական բրիգադաներ: Այդ բրիգադաները շրջֆինբաժինների ընկավարությամբ հետազոտում են ամբողջ շրջանի փոխառության հաշվարկումների յու համար պարբերաբար պետք է կազմակերպվեն հասարակական

են Ֆինժողկոմատի մարմինների կողմից և ներկայացվում են բանվորա-գյուղացիական տեսչության:

## IX. ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՑՈՒՄԸ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄԵՋ

44. Գյուղական ձեռնարկությունների և հիմնարկների բանվորների և ծառայողների մեջ (նույն թվում ՄՏԿ և խորհտնտեսությունների) փոխառության կոլեկտիվ բաժանեգրությունը անցկացվում է նույն պայմաններով, ինչ վոր քաղաքի բանվորների և ծառայողների կոլեկտիվների մեջ: Բանվորները և ծառայողները փոխառությունը բաժանեգրվում են իրենց օժանդակող հանձնաժողովների միջոցով և պարտատոմսերի արժեքը վճարում են իրենց ձեռնարկությունների և հիմնարկների վարչության միջոցով մաս-մաս մինչև 1932 թ. հունիսի 1-ը: Բանվորների և ծառայողների կոլեկտիվ բաժանեգրության կարգը և պայմանները մասնանշված են ԽՍՀՄ-ի ՖԺԿ-ի 1931 թ. մայիսի 3-ի № 171 հրահանգում «Փոխառության տարածումը քաղաքի բնակչության մեջ»: Այդ հրահանգով պետք է ղեկավարվեն շրջանային այն բոլոր հիմնարկները, վորոնք մասնակցում են բանվորների և ծառայողների կոլեկտիվ բաժանեգրության անցկացմանը գյուղում:



## X. ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՐ

### Վարձատրության չափը.

45. Փոխառության տարածման աշխատանքի համար գյուղական վայրերում վճարվում է վարձատրություն հետևյալ աղյուսակում մասնանշված չափով.

| | Վարձատրության ընդհանուր նորման | ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՈՐՄԱՅԻՑ ՎՃԱՐՎՈՒՄ Է (տոկոսի հարյուրերորդական մասերով) | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | Պետբանկի հիմնարկներին | Խնայդրամարկղին | Կոլտնտեսություններին կոլեկտիվիստների կամ անհատատնտեսություններին | Շրջգործկոմներին | Գյուղխորհուրդներին |
| Կանխիկ վճարը գյուղխորհուրդների կողմից գյուղական ակտիվի միջոցով . . . . . | 1% | 0.10 | — | — | 0.15 | 0.75 |
| Կանխիկ վճարը պետբանկի հիմնարկների կողմից . . . . . . . . . . . . . . | 1% | 0,70 | — | — | 0.30 | — |
| Կանխիկ վճարը խնայդրամարկղների կողմից | 1% | 0,10 | 0.60 | — | 0.30 | — |
| Պետբանկի հիմնարկներում ձևակերպված գյուղական բանվորների և ծառայողների կոլեկտիվ բաժնեգրություն . . . . . . . . | 1% | 0,45 | — | 0,25 | 0.30 | — |
| Նույնը խնայողական դրամարկղներում . . . | 1% | 0,10 | 0,35 | 0.25 | 0,30 | — |
| Գյուղխորհուրդների կողմից Պետբանկի հիմնարկներում ձևակերպված կոլտնտեսականների կոլեկտիվ բաժնեգրություն . . . . . . . | 1,5% | 0,45 | — | 0,25 | 0,30 | 0.50 |
| Նույնը ձևակերպված գյուղխորհուրդների կողմից խնայողական դրամարկղներում . . . . | 1,5% | 0,10 | 0,35 | 0.25 | 0.30 | 0.50 |

## Վարձատրության վճարման կարգը.

46. Շրջգործկոմները վարձատրություն ստանում են անմիջականորեն Պետբանկի հիմնարկներից լրիվ նորմաներով այն գումարներից, վորոնք մուտք են յեղել առ հաշվարկման որը—առաջին անգամ 21/XII-31 թ. հետո և յերկրորդ անգամ—փոխառության իրացման հաշվարկումները վերջանալուց հետո, սակայն հանվում է առաջուց ստացված գումարը:

47. Գյուղխորհուրդներին վարձատրություն վճարում է Պետբանկն այն վարկային հիմնարկությունների միջոցով, վորոնց ամրացված են գյուղխորհուրդները փոխառության իրացման համար, նախորդ հոդվածում մատնանշված կարգով և ժամկետներում:

48. Նույն կարգով և նույն ժամկետներում գյուղխորհրդին տրվում է վարձատրություն, վոր հասնում է կոլտնտեսություններին կից ոժանդակող հանձնաժողովներին: Այդ ձևով ստացված գումարները գյուղխորհուրդը բաշխում է կոլտնտեսային ոժանդակող հանձնաժողովների մեջ յուրաքանչյուր կոլտնտեսության մեջ հավաքված մուծումների գրանցումների համաձայն (ձև № 3 ա հաշվարկային տեղեկագրերը և լիազորների անձնական հաշիվները ձև № 1 ա պարտավորության վրա):

49. Գյուղական բանվորների և ծառայողների կոլեկտիվների ոժանդակող հանձնաժողովներին վարձատրությունը վճարվում է յերկու ժամկետում. 1/VIII 31 թ. հետո կանխավճար ձևակերպված բաժնեգրության գումարներից 0,1 տոկոսի չափով և բաժնեգրության հաշվարկումների վերջանալուց հետո, այսինքն 1/VI 32 թ.— 0,25 տոկոս յուրաքանչյուր կոլեկտիվի կողմից փաստացի մուծված գումարից, բայց հանած տրված ավանսը:

50. Կանխիկ հաշվով փոխառության պարտատոմսեր վաճառող գյուղխորհրդի կոնտրագենտները և կոլտնտեսականների մուծումները հավաքող լիազորները աշխատանքը կատարում են հասարակական բեռնվածության կատարման կարգով և վարձատրություն չեն ստանում:

ԽՍՀՄ-ի ՑԺԿ-ի կոլեգիայի անդամ Պետաշխնայդրամարկղների և պետվարկի գլխավոր վարչության պետ Լիֆշից

Խորհրդատու Ցակոլինսկի

«Համաձայնեցված է»

Պետբանկի վարչության անդամ Վինոկուր

Փոխառությունների բաժանմունքի վերատեսուչի տեղակալ Սորկին:



## Պարտավորություն

«Հնգամյակը 4 տարում» փոխառության (հնգամյակի 3-րդ վճռական տարվա մասի) յերկրորդ բաժնի պարտատոմսերի վաճառման վերաբերյալ

1931 թ. ______________ տրված է սույն պարտավորագիրը

ամիս, ամսաթիվ

______________________ հետևյալի մասին

Ում է տրված

1. Յես ներքոստորագրյալս ______________

(Ազգանուն, անուն, հայրանուն)

հանձն եմ առնում վաճառելու «Հնգամյակը 4 տարում» փոխառության յերկրորդ մասի պարտատոմսերը կանխիկ դրամով անվանական (պարտատոմսերի վրա նշանակված) գնով:

2. Պարտատոմսերի վաճառումից ստացված դրամները պարտավորվում եմ հանձնել (ցույց տալ ում) յուրաքանչյուր հինգ որը մի անգամ-յուրաքանչյուր ամսի 1-ին, 6-ին, 11-ին, 16-ին, 21-ին և 26-ին:

3. Դրամները ժամանակին չմուծելու համար պարտավորվում եմ վճարել . . . . . . . տուգանք որական յուրաքանչյուր

(Ցույց տալ ում)

ժամկետանց տասը (10 ռ.) ռուբլու համար 1 (մեկ) կոպեկ:

4. Պարտատոմսերի կուպոնների և պարտատոմսերի վաճառումից գոյացած գումարների ապահովության համար պարտավորվում եմ կրել լիակատար պատասխանատվություն իմ ամբողջ գույքով: Կորած պարտատոմսերի արժեքը պարտավորվում եմ հատուցանել հաշվարկման որվա պարտատոմսերի վաճառման գներով: Փոխառության տոկոսային մասի պարտատոմսերը պակասող կուպոններով հանձնելու դեպքում պարտավորվում եմ հատուցանել նմանապես և պակասող կուպոնների անվանական արժեքը

Պարտավորություն տվողի ստորագրությունը ........................

Պարտավորություն տվող անձի հասցեն ........................

Պարտավորություն ստացած պատասխանատու անձի ստորագրությունը ........................

Տեղ. հրահանգի պատճեն ստացա ........................
(ստորագրություն)

Ձև № 1 հակառակ յերեսը

## ԱՆՁՆԱԿԱՆ ՀԱՇԻՎ.

| Տված են պարտատոմսեր վաճառելու համար | | Ստացված է դրամ | Վերադարձված են պարտատոմ. | Պարտքի մնացորդը | Պատասխանատու անձի ստորագրությունը |
|---|---|---|---|---|---|
| Ամիս, ամսաթիվ | Գումարը | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | | | | | |

Սույն պարտավորությամբ բոլոր հաշվարկումները վերջացված են ........................
(թիվ և ամիս)

Պատասխանատու անձի ստորագրությունը ........................

Ձև № 1 ա

### պարտավորություն

«Հնգամյակը 4 տարում» փոխառության (հնգամյակի 3-րդ վճռական տարվա) յերկրորդ բաժնի բաժնեգրված կոլտնտեսականներից պարտատոմսերի դիմաց մուծումները հավաքող լիազորի.

1931 թ. ________________ տրված է սույն պարտավորությունը
(որ, ամիս)

........................ գյուղխորհրդին հետևյալի մասին
(գյուղխորհրդի անունը)

1. Ներքստորագրյալ լիազորը ........................
(Ազգանուն, անուն, հայրանուն)

ակտիվիստ-հասարակական աշխատող, ցանկանալով ուժեղ սոցիալիստական շինարարության հնգամյակի յերրորդ վճռական տարվա փոխառության տարածման աշխատանքին մասնակցելու միջոցով,



ընդունում եմ գյուղխորհրդի հանձնարարությունը . . . ։ փոխառության բաժնեգրված կոլտնտեսություններից հավաքել և պարտատոմսերի համար հասանելիք մուծումները գյուղխորհրդին հանձնելու համար։

մար հասանելիք մուծումները գյուղխորհրդին հանձնելու համար։

2. Գիտակցելով պատասխանատվությունն այն վնասի համար, վոր յես կարող եյի բերել սոցիալիստական շինարարությանը իմ վրա վերցրած պարտավորությունը խախտելու դեպքում, յես, լիազոր (ազգանուն, անուն, հայրանուն) հոժարակամ վերցնում եմ ինձ վրա գույքային այն ամբողջ պատասխանատվությունը, վորը մատնանշված է սույն պարտավորության մեջ։

3. Առաջին մուծումը հավաքելու համար գյուղխորհուրդը լիազորին տալիս է իր կողմից բաժնեգրվածների համար պատրաստված հաշվարկային անդորրագրերը և դրանց արմատները։ Առաջին մուծման ստացումը գրանցում է ինչպես հաշվարկային անդորրագրի նույնպես և նրա արմատի մեջ և դրամների ստացման համար ստորագրում է անդորրագրում, նշելով դրամների ստացման օրը։ Անդորրագիրը տրվում է բաժնեգրվածին։ Բաժնեգրվածն իր հերթին անդորրագրի արմատում իր ստորագրությամբ հաստատում է լիազորի գրանցումը և նշում է մուծման վճարման օրը։ Անդորրագրի արմատը ստացված փողերի հետ միասին լիազորը հանձնում է գյուղխորհրդին (կ. 5)։

4. Յուրաքանչյուր հաջորդ մուծումն ստանալու համար գյուղխորհուրդը լիազորին տալիս է բաժնեգրվածների հաշվարկային անդորրագրերի արմատները։ Հաշվարկային անդորրագրի արմատը սույն պարտավորության բաժնեգրվածին ներկայացնելն ապացույց է, վոր լիազորն իրավունք ունի մուծումն ստանալու։ Յուրաքանչյուր մուծումն ընդունելու դեպքում, ինչպես լիազորը, նմանապես և բաժնեգրվածը գրանցում են կատարում անդորրագրի և նրա արմատի մեջ նույն կարգով, վոր ցույց է տրված 3 կ. առաջին մուծման համար։

5. Հաշվարկային անդորրագրերի արմատները և բաժնեգրվածներից ստացված դրամները լիազորը պարտավորվում է հանձնել գյուղխորհրդի վոչ ուշ քան յերեքօրյա ժամկետում, հաշվելով դրամները բաժնեգրվողից ստանալու ժամանակվանից։

6. Լիազորը պարտավոր է բաժանել բաժնեգրվածներին չշահող մասի պարտատոմսերի ամրացման տալոնները։ Տալոնների ստաց-

ման համար լիազորը գյուղխորհրդին տալիս է ստացական: Բաժնեգրվածներին հերթական հրջագայության ժամանակ լիազորը տալիս է տալոնները յուրաքանչյուր բաժնեգրվածից հաշվարկային անդորրագրի վրա ստացական ստանալով:

7· Բաժնեգրողների հետ հաշվարկումը վերջացնելուց հետո, լիազորը գյուղխորհրդի հանձնարարությամբ պարտավորվում է բաժնեգրվածներին բաժանել արժեքը վճարված խակական պարտատոմսերը: Պարտատոմսերն ստանալու ժամանակ բաժնեգրվողը լիազորին հանձնում է ամրացման տալոնները և հաշվարկային անդորրագիրը: Պարտատոմսերի ստացման համար բաժանորդը ստորագրում է հաշվարկային անդորրագրի արմատի վրա: Հաշվարկային անդորրագրերի արմատները, բաժնեգրվածներին հանձնված հաշվարկային անդորրագրերը և ամրացման տալոնները լիազորը հանձնում է գյուղխորհրդին:

8· Բաժանորդներից ստացված մուծումների ապահովության բաժնեգրվածներին հանձնելու գյուղխորհուրդի ստացված ամրացման տալոնների և պարտատոմսերի ապահովության և տոկոսաբեր պարտատոմսերի կուպոնների ապահովության համար լիազորը կրում է գույքային լիակատար պատասխանատվություն: Մուծումները ժամանակին գյուղխորհրդին չհանձնելու դեպքում (կ· 5), լիազորը պարտավորվում է բացի դրամներ վճարելուց, վճարել նաև տուգանք ժամկետի բաց թողնելու ավանից առ հաշվարկման որը մեկ տասներորդական տոկոսի չափով ժամկետին չհանձնված դրամական գումարից ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար (ամսական 3 տոկոս): X

9· Եթե ծագե դատական գործ, այն դեպքում քննում է դատարանը գյուղխորհրդի գտնված վայրում:

10· Պարտավորությունը ստորագրում է լիազորը երկու օրինակից և երկու օրինակն էլ հաստատվում են գյուղխորհրդի ստորագրությամբ և կնիքով: Մի օրինակը տրվում է լիազորին, երկրորդը մնում է գյուղխորհրդի մոտ:

Պարտավորությունը լիազորի կողմից ստացված է

Գյուղխորհրդի կնիքը

Լիազորի ստորագրությունը

Գյուղխորհրդի ստորագրությունը·



Պարտավորության հակառակ երեսը Ձև № 1—ա

### ԱՆՁՆԱԿԱՆ ՀԱՇԻՎ

| Ամիս ամսաթիվ | Ստացված փող | | Փող ստացողի ստորագրությունը |
|---|---|---|---|
| | Ռուբլի | Կոպ. | |
| | | | |

Ձև № 2

### Տեղեկագիր

«Հնգամյակը 4 տարում» փոխառության 2—րդ մասի պարտատոմսերի մուծքի և ելքի

| Ամիս, ամսաթիվ | Ումից և ստացված | Ընդհանուր գումարը | Ամիս ամսաթիվ | Վճարված կամ ոչ և տրված (ուղարկված) | Ընդհանուր գումարը | Ստորագրության պարտատոմսերի ստացման մասին (գումարը բառերով և ստորագրություն) |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| | | | | | | |

Բաժնեգրման թերթիկ Ձև № 3

Մենք ներքո ստորագրյալներս

(այս ինչ կոլտնտեսության կամ միավոր հող մշակող ընկերության, այս ինչ գյուղատնտ· կոմունայի անդամները)

կամենում ենք ձեռք բերել կոլեկտիվ բաժնեգրության կարգով «Հնգամյակը 4 տարում փոխառության երկրորդ բաժնի (Հնգամյակի

3-րդ վճռական տարվա մասի) պարտատոմսեր ստորև 6-րդ սյունյակում մատնանշված գումարի և պարտավորվում ենք վճարել սահմանված ժամկետներում գնած պարտատոմսերի արժեքը

.......................................................... գյուղխորհրդին
(անունը)

| №№ ըստ կարգի | Ազգանուն, անուն հայրանուն | Բնակավայր (գյուղի անունը) | Պարտատոմսի գումարը: Տոկոսային մաս | Պարտատոմսի գումարը: Վոչ տոկոսային մաս | Ընդհանուր գում. 4-րդ և 5-րդ սյուն. | Պարտատոմսերի գնումը | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| | | | | | | | |

Ձև № 3 ա

## Հաշվարկման տեղեկագիր

______________ ______________ կոլտնտեսության անդամների հետ
(գյուղխոր. անունը) (անունը)

մուծումները բաժնեգրվածներից հավաքում և լիազոր ______________ ազգան., անուն, հայրան.

վորը բաժնեգրվել է «Հնգամյակը չորս տարում փոխառության (հնգամյակի 3-րդ վճռական տարվա մասին) պարտատոմսերին

Տեղեկագրերի լրացման կարգը տես ԽՍՀՄ-ի ԺԾԿ-ի № 213 հրահ. մեջ

| Բաժնեգրվողի ազգանունը, անունը և հայրանունը | Հաշվարկային անդորագրի № | Բաժն. գում.: Տոկոսային մաս | Բաժն. գում.: Վոչ տոկոս. մաս | Բաժն. գում.: Ընդամենը | Մուծք և յեղել փող: Վճարման օրը | Գումար | Վճարման օրը | Գումար | Վճարման օրը | Գումար | Վճարման օրը | Գումար | Վճարման օրը | Գումար | Վճարման օրը | Գումար | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | | | | | | | |



Ձև № 3 բ

______________
(գյուղխորհրդի անունը)

**Փողի գանձման լիազոր** ______________
(ազգանուն, անուն և հայրանուն)

______________
(Կոլտնտեսության անունը)

## Հաշվարկման անդորրագիր №______

«Հնգամյակը չորս տարում» փոխառության 2-րդ բաժնի (հնգամյակի 3-րդ վճռական տարվա մասի) բաժնեգրության համար

______________
(Ցույց տալ բաժնեգրվողի ազգանունը, անունը, հայրանունը)

| Տոկոսաբեր մաս | Անտոկոս մաս | Ընդամենը |
|---|---|---|
| | | |

Գյուղխորհրդի ստորագրությունը և կնիքը

Անդորրագիրը տրված է ______________ 1931 թ.
(ամիս ամսաթիվ)

Անդորրագրի հակառակ յերեսը

## Պարտատոմսերի հաշվարկումը

| Փողի վճարման օրը | Գումարը: Ռուբլի | Գումարը: Կոպ. | Լիազորի ստորագրութ. փողի ստացման մասին |
|---|---|---|---|
| | | | |

Ձև № 3 բ

(Գյուղխորհրդի անունը)

**Փողի հավաքման լիազոր** ____________________

(ազգանուն, անուն, հայրանուն)

(Կոլտնտեսության անունը)

Հաշվարկման անդորրագրի արմատ №

«Հնգամյակը չորս տարում» փոխառության 2-րդ բաժնի (հնգամյակի 3-րդ վճռական տարվա մասի) պարտատոմսերի բաժանորդագրության համար

Ցույց տալ բաժանորդագրվողի ազգանունը, անունը, հայրանունը

բաժանորդագրության գումարը

| Տոկոսաբեր մաս | Վոչ տոկոսաբեր մաս | |
|---|---|---|
| | | |

**Բաժանորդագրվողի ստորագրությունը ամբացման**

**տալոնների ստացման համար**

(ամիս, ամսաթիվ, տարեթիվ, ստորագրություն)

Բաժանորդագրվողի ստորագրությունը արժեքը վճարած պարտատոմսերի ստացման համար

(Պարտատոմսերի գումարը ամսաթիվ, ամիս, տարեթիվ, ստորագրություն):



Անդորրագրի արմատի հակառակ յերեսը

Պարտատոմսերի հաշվարկում

| Փողի վճարման օրը | Գումարը | | Բաժանորդագրվողի անձնական ստորագրությունը մուծման գումարի և փողի վճարման օրվա մասին |
|---|---|---|---|
| | Ռուբլի | Կոպ. | |
| | | | |

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ

Գլավլիտ 6676 (բ), Պատվեր 3955, Տիրաժ 4000

ՀՀ Ազգային գրադարան

NL0207093

27965

336.3(4
μ-11